ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունիս 2026 թվական N 04-Լ

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» և «Վերածնվող Հայաստան» կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացություններն ստացվել են 2026 թվականի մայիսի 13-ին, որից հետո տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում ինչպես պետական մարմիններից, այնպես էլ կուսակցություններից պահանջվել են տեղեկություններ, որոնցից վերջին տեղեկատվությունը ստացվել է 2026 թվականի հունիսի 9-ին:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, 40.1-ին հոդվածի 14-րդ մասով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետական մարմիններից և կուսակցություններից հայցված մեծածավալ տեղեկատվության ուսումնասիրության համար օրենքով սահմանված 30-օրյա ժամկետը բավարար չէ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ***որոշում է.***

1. Պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգել 60 (վաթսուն) օրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Մ. ԳԱԼՍՏՅԱՆ

ք. Երևան